ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Հ.Սմբատ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/157 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Նստարան՝ Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով: Նստարանը պետք է պատրաստված լինի առնվազն 2000x900մմ չափսերի:Մետաղական հիմնակմախքը պետք է պատրաստված լինի քառակուսի կտրվածքով խողովակից /40x40x3մմ/ նստարանի 2 կողամասերում՝ եռակցումով /եռակցվող մասերը հղկել հղկաքարով/: Մետաղական կողամասերի բարձրություն՝ առնվազն 630մմ:Մետաղյա կողամասերի ոտքերի ստորին մասում եռակցված առնվազն 3մմ հաստությամբ առնվազն 70x70մմ չափսերի 4 մետաղական թիթեղներ՝ յուրաքանչյուրի վրա 4 անցքեր, հարթակին /հատակին/ ամրացնելու համար: Նստարանի անմիջապես նստատեղի տակ /փայտյա մասերի տակ, առջևում և ետնամասում/ 2 մետաղական կողամասերին եռակցված 2 հատ առնվազն 30x30x1.5 մմ չափսերի քառակուսի կտրվածքով խողովակ: Մետաղական 2 կողամասերին՝ նստատեղի փայտերի ամրացման համար եռակցված պողպատյա անկյունակներ՝ առնվազն 40x40x4մմ չափերի առնվազն 460մմ երկարության, իսկ հենակի փայտերի ամրացման համար՝ պողպատե անկյունակներ առնվազն 40x40x4մմ չափերի առնվազն 300մմ երկարության:Նստարանի մեջտեղում՝ նստատեղի փայտյա մասերի տակ և հենակի փայտյա մասերի տակ, տեղադրված առնվազն 30x20x1.5մմ հաստությամբ ուղղանկյուն կտրվածքով մետաղական խողովակ՝ եռակցված հիմնակմախքին, իսկ փայտյա մասերին՝ հեղյուս և մանեկով /բոլտ ու գայկա/ ամրացված: Նստարանի հենակին /4հատ/ և նստատեղին /6հատ/ 2 մետաղական կողամասերին հեղյուսով և մանեկով ամրացված առնվազն 1900x60x40մմ չափսերի չորացրած հաճարի հղկված փայտյա մասեր՝ նստատեղի մասերում եզրերը կլորացված: Մետաղական մասերը՝ երկշերտ ներկված /գույնը ընտրել պատվիրատուի պատվերով/: Փայտյա մասերը

	լաքապատված հաճարի գույնը մգեցնող լաքով։Թիկնակի վերին փայտյա մասի վրա, լազերային փորգրությամբ, փորագրված լինի §Մալաթիա-Սեբաստիա¦։ Նստարանների տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված հասցեներով, մատակարարի միջոցներով։ Նստարանի մետաղական հիմնակմախքի պատրաստումը /կորոցումները/ իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված լուսանկարին համապատասխան։ Նշված աշխատանքները պետք է իրականացվեն պատվիրատուի կողմից տրվող պատվեր առաջադրանքի հիման վրա։ * Նստարանների պատրաստումը իրակականացնել շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան։ *Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Հ.Սմբատ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/157 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	